# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N2

ք. Երևան

17.06.2025թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/29211-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.6/14270-2023, ՀՀ էկոնոմիկայի 03/20309-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 03/11.1/13668-2023 և Կադաստրի կոմիտեի ԳՄ/15864-2023 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք, Դարբաս և Որոտնավան բնակավայրերի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից 5.24343 հա գյուղատնտեսական արտադրական հողեր (կադաստրային ծածկագրեր՝ 09-028-0003-0012՝ 1.0 հա, 09-028-0003-0001-ից 4.24343հա).
- ջրային նպատակային նշանակության հողերից 0.39407 հա հիդրոտեխնիկական և ջրատնտեսական օբյեկտների հողեր (կադաստրային ծածկագիր՝ 09-078-0104-0109-ից).
- գյուղատնտեսական նշանակության հողերից 13.77757 հեկտար, որից 4.12667 հա ջրովի վարելահող, 8.61902հա արոտավայր, 1.03188 հա այլ հողատեսք (կադաստրային ծածկագրեր՝ 09-031-0208-0028-ից՝ 11.47047 հա, 09-078-0110-0207՝ 1.27522 հա, 09-078-0104-0175-ից՝ 1.03188 հա) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Կոստանյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան

*ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ*

# ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդկետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման և հաշվի առնելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի --------------- N ------դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է***.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք, Դարբաս և Որոտնավան բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում, համաձայն հավելվածների, պաշտպանական կարիքների համար, համայնքային սեփականություն հանդիսացող,
   1) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի «գյուղատնտեսական արտադրական հողեր» գործառնական նշանակության 5.24343 հեկտար (կադաստրային ծածկագրեր՝ 09-028-0003-0012՝ 1.0 հա, 09-028-0003-0001-ից 4.24343հա).
   2) ջրային նպատակային նշանակության «հիդրոտեխնիկական և ջրատնտեսական օբյեկտների հողեր» գործառնական նշանակության 0.39407 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-078-0104-0109-ից).
   3) գյուղատնտեսական նշանակության հողերից 13.77757 հեկտար, որից 4.12667 հա ջրովի վարելահող, 8.61902հա արոտավայր, 1.03188 հա այլ հողատեսք (կադաստրային ծածկագրեր՝ 09-031-0208-0028-ից՝ 11.47047 հա, 09-078-01110-0207՝ 1.27522 հա, 09-078-0104-0175-ից՝ 1.03188 հա).

   փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ

Պաշտպանական կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք, Դարբաս և Որոտնավան բնակավայրերում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, տարբեր նպատակային նշանակության թվով 4 միավոր հողամասերի, համապատասխանաբար 5.24343, 11.47047, 1.27522 և 1.42595 հեկտար մակերես ունեցող հողամասերի (կադաստրային ծածկագրեր՝ 09-028-0003-0001-ից՝ 4.24343հա, 09-028-0003-0012՝ 1.0 հա, 09-031-0208-0028-ից՝ 11.47047 հա, 09-078-0110-0207՝ 1.27522 հա, 09-078-0104-0175-ից՝ 1.03188հա, 09-078-0104-0109-ից՝ 0.39407 հա) այն դասելով հատուկ նշանակության հողերի շարքը: Հողամասերի տեղադիրքը ընտրվել է պաշտպանության բնագավառի լիազոր պետական մարմնի կողմից:

Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունից հետո, անշարժ գույքը անհատույց սեփականության իրավունքով փոխանցվելու է Հայաստանի Հանրապետությանը և ընդգրկվելու է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

Նախատեսված հողամասերից 500 մետր շառավղով սահմանափակված տարածքներում միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհներ չկան:

Անվտանգության խնդիրների կարևորությունից ելնելով, հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով կազմված հողաշինարարական գործին տալիս եմ **դրական** կարծիք:

Համայնքի ղեկավար Ա.Հակոբջանյան

Հաստատում եմ՝ ՍԻՍԻԱՆ համայնքի ղեկավար

Ա. Հակոբջանյան

«02» 10 2023 թ.

# ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դարբաս բնակավայրում գտնվող 11.47047 հեկտար հողամասի նպատակային նշանակության փոփոխության իրավիճակային հատակագիծ

Մ 1:10000



Հաստատում եմ՝ ՍԻՍԻԱՆ համայնքի ղեկավար

_____________ Ա. Հակոբջանյան

«09» 10 2023 թ.

# ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Որոտնավան բնակավայրում գտնվող 1.27522 և 1.42595 հեկտար հողամասերի նպատակային նշանակության փոփոխության իրավիճակային հատակագիծ

Մ 1:10000



Հաստատում եմ՝ Սիսիան համայնքի ղեկավար

______________________Ա. Հակոբջանյան

«02» 10 2023 թ.

# ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք բնակավայրում գտնվող 5.24343 հեկտար հողամասի նպատակային նշանակության փոփոխության իրավիճակային հատակագիծ

Մ 1:10000



09-028-0003-0001-ից 4.24343 հա
09-028-0003-0012 1.0000 հա

| | X | Y |
|---|---|---|
| 1 | 8565167.6108 | 4395071.2103 |
| 2 | 8565157.0464 | 4395219.1904 |
| 3 | 8565108.5288 | 4395319.6019 |
| 4 | 8565103.6693 | 4395347.9227 |
| 5 | 8565319.8838 | 4395355.6034 |
| 6 | 8565314.0537 | 4395345.4443 |
| 7 | 8565317.2927 | 4395317.6179 |
| 8 | 8565320.2068 | 4395310.8228 |
| 9 | 8565326.0369 | 4395304.0287 |
| 10 | 8565342.2291 | 4395293.9985 |
| 11 | 8565349.0302 | 4395289.7915 |
| 12 | 8565350.9732 | 4395284.9384 |
| 13 | 8565362.9554 | 4395191.4950 |
| 14 | 8565357.4543 | 4395189.6290 |
| 15 | 8565314.8717 | 4395182.8419 |
| 16 | 8565327.2868 | 4395106.0087 |
| 17 | 8565330.0199 | 4395105.5577 |
| 18 | 8565332.6382 | 4395082.9917 |

09-031-0208-0028-ից 11.47047 հա

| | X | Y |
|---|---|---|
| 1 | 8599231.2571 | 4371559.6736 |
| 2 | 8599235.2390 | 4371613.3305 |
| 3 | 8599282.2955 | 4371687.9621 |
| 4 | 8599283.4126 | 4371735.3333 |
| 5 | 8599261.5983 | 4371789.6055 |
| 6 | 8599284.3617 | 4371875.6401 |
| 7 | 8599316.7000 | 4371922.9222 |
| 8 | 8599604.4089 | 4371993.8972 |
| 9 | 8599604.4089 | 4371606.8059 |
| 10 | 8599408.9120 | 4371627.9424 |
| 11 | 8599256.8301 | 4371569.5007 |

09-078-0110-0207 1.27522 հա

| | X | Y |
|---|---|---|
| 1 | 8598146.0767 | 4372627.9049 |
| 2 | 8598146.5979 | 4372621.7513 |
| 3 | 8598140.2876 | 4372621.8899 |
| 4 | 8598100.8923 | 4372629.5494 |
| 5 | 8598089.9936 | 4372656.1682 |
| 6 | 8598084.5139 | 4372676.1805 |
| 7 | 8598101.2141 | 4372723.3756 |
| 8 | 8598091.8311 | 4372816.5226 |
| 9 | 8598104.9451 | 4372819.2287 |
| 10 | 8598120.9794 | 4372794.9534 |
| 11 | 8598129.9455 | 4372782.9952 |
| 12 | 8598138.1436 | 4372788.9013 |
| 13 | 8598146.2347 | 4372794.8084 |
| 14 | 8598149.1718 | 4372797.1974 |
| 15 | 8598170.9501 | 4372767.9479 |
| 16 | 8598189.7383 | 4372742.0906 |
| 17 | 8598183.8562 | 4372729.1764 |
| 18 | 8598146.0767 | 4372627.9049 |

09-078-0104-0175-ից 1.03188 հա
09-078-0104-0109-ից 0.39407հա

| | X | Y |
|---|---|---|
| 1 | 8598196.7394 | 4372657.6183 |
| 2 | 8598262.3292 | 4372701.6579 |
| 3 | 8598331.9304 | 4372718.3391 |
| 4 | 8598358.5597 | 4372667.4961 |
| 5 | 8598365.2814 | 4372642.5770 |
| 6 | 8598359.2437 | 4372605.1004 |
| 7 | 8598358.7637 | 4372603.0364 |
| 8 | 8598369.3294 | 4372574.8030 |
| 9 | 8598361.0872 | 4372560.2568 |

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 6-ի թիվ 2 դրական եզրակացությունը՝ անհրաժեշտ է պաշտպանական կարիքներ համար թվով 4 միավոր հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխել և նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
բաժնի պետ՝ Վ.Մանուչարյան

01.09.2025թ

---

## ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
բաժնի պետ՝ Վ.Մանուչարյան

01.09.2025թ